

Երկու եղբայր ձեռք ձեռքի տուած՝ իրենց պաշտօնն արժանապէս վարելու իրարու հետ կը մրցէին։ Նոյն ժամանակներն ի Նոր-գիւղ (Եէնի-քէջ) ծովափնեայ ամարաստուն՝ պալատ մը կը շինէին երկուքը, եւ ծախուց մէկ մասն՝ իբր 30.000 դահեկան, որ նոյն ժամանակին համեմատ բաւական մեծ գումար էր, այս վախճանաւ պարգեւ առին իրենց խնամագութ պաշտպան՝ Սուլթան Մահմուտ Բ.էն։ Թշնամիք՝ որոնք միշտ անխոնջ նորանոր առիթներու կը սպասէին, այս շինութիւնն առիթ առնլով՝ իրենց քսու լեզուն սկսան թեքել ու սրել։ Բայց ուստի՞ թշնամեաց այս աստիճանի նախանձը։

Գլխաւոր պատճառն էր Տիւղեանց թագաւորին շատ սիրելի ըլլալը։ Ասոնք միշտ ազատ մուտ եւ ել ունէին, քանի մը տուրքերէ բոլորովին ազատ էին։ Սերգիս քաջ մական (Ֆէրի) կը խաղար, եւ նետաձգութեան մէջ արտաքոյ կարգի յաջողաձեռն էր. այս խաղերն ալ թագաւորին շատ հաճելի ըլլալուն, արտօնութիւն շնորհած էր Սերգիսին՝ որ զինքն ասոնցմով զուարճացընէ։

Սուլթանն՝ որ միշտ համոզեալ էր, թէ Տիւղեանց ազգատոհմի քաջածանօթ հաւատարմութիւնն այս սլաքալեզու թշնամեաց չարութիւնն ի դերեւ պիտի հանէ, որպէս զի նախանձորդներն աւելի յայտնանախատ խայտառակութիւն, հրաման կու տայ որ քննութիւն ըլլայ եւ Իպրահիմ Սարէմ Էֆէնտին քննիչ կը կարգէ։ Տիւղեանց թշնամեաց պարագլուխներէն էր Շապճի Հրեայն, որ բնականապէս մամոնայական ընչա-